

ՈՍՏԱՆԱՅԻ ՏՈՒԻՆ

Ե Ի

Թ Լ Օ Լ -Դ Ա Խ Ի Թ

Կէլնի կէլնի մէյ կուապաշտ թագաւոր: Էսա թագաւոր կը-
նստէր Ռստան քեաղաք: Գագիկ թագաւորն էլ կընստէր իլու վանք:
Կուապաշտ թագաւոր մարդմ յօզօրկեց Գագիկ թագաւորուն ասաց:
Քեռ աղջիկը պիտի տաս իմ լաճուն, թէ չէ կուգեամ ձեր խաչա-
պաշտները զըմէն կըքեաշէմ սուր: Էն էլ մարդ յօզօրկեց մօտ
կուապաշտ թագաւոր՝ ասաց. Հիւի կանեմ, կըխնզընմ ձիկ իրեք
օր օր տու, ես քյե ջուղապ կուտամ: Էղա մարդն ասաց. Լաւ,
կնամ, իրեյք օր՝ օր եմ տուեն Եղա մարդ դարձաւ մօ Գագիկ թա-
գաւոր՝ ասաց, թէ իրեյք օր՝ օր տիւ, լաւ, գնաւ:

Գագիկ թագաւոր ուր աղջիկ կանչեց ուր մօտ, և ասաց. Աղ-
ջին, էտա անսատուածը քյե կուզի, տամ, չխտամ, բնչ անեմ: Աղ-
ջիկն ասաց. Խէրիկ, տաս վայ ի, չխտամ վավէլեր ի. առաւիտուն
կուգեա մեր միլլաթ զըմէնը կսպանի. ձիկ էլ կտանի: Ծիւ բնչ
կանսա անե ինոր, ասա՝ ես իմ աղջիկ կուտամ քեռ լաճուն. ամա
տիւ մէյ ժամ պիտի շինես. ես վարդպակետմ խետ իմ աղջկան
կօզօրկեմ զեա էնտեղ, որ իմ աղջիկը օր իրեյք դան էրթա ժամ: Դօրիս
Գագիկ թագաւոր մարդմ յօզօրկեց գնաց մօտ էղա կուա-
պաշտ թագաւոր, ասաց. Մեր թագաւորը կասի թէ, ժամմ շինես,
որ խետ իմ աղջկան վարդպակետմ կօզօրկեմ կեան էն տեղ, որ օր
իրեյք դան էրթայ ժամ. ես իմ աղջիկն կուտամ քեռ լաճուն:
Հըխո չեմ իտայ: Ասեց՝ աղէկ. ես կըխնեմ ժամ, դէ որ էն մար-
դը դարձաւ կնաց. աղջիկն առեց, տարաւ, վարդպակետն էլ խետ
կնաց էտա տեղ: Էն ինչ աղջիկն էր, օր իրեյք դան կէրթէր ժամ.

*) Պատմեց Քերծ զիւղում Մանեւկ Սարդուեան անգըագէտ գէւղացին
1910 թ. յուլիսի 21-ին:

էն ինչ կոսպաշտ թագաւորն էր, կուռքյ կըպաշտէր: Ամմա էդ կոսպաշտ թագաւոր, ինչ որ ի. պառամ դրեր էր առջև աղջկան, ինոր խաց կիտէր, ջուր կիտէր, խզմաթ կանէր: Էտա թագաւորը էտա աղջկանը չէր մօտենայ, ամա ինատու էր տարեւ: Մէկ օրմ աղջիկը, վարդապետը, էտա պառաւը մէյտեղ կնացին սարեր, վէր աղպրներաց ման կուզիին: աղջիկն ասաց պառոււն: Մէյ թասմ ջուր պե էտա աղպրից խմեմ: Պառաւը թասմ ջուր իտուր խմաւ: Ասաց՝ մէկ էլ տու, որ էդա ջուր խմաւ էդ աղջիկն էլաւ տղով: Էլաւ ամիսմ էրկու մնաց, պառաւը իրիշկաւ աղջկայ փորը օրէ օր կըջոջանայ: Կնաց կոսպաշտ թագաւորուն ասաց: Թագաւոր, արև էտա աղջկայ մօտէն խաբանը ես. օրէ օր էտա աղջկայ փորը կըջոջանայ: Ասաց՝ ես խաբար չիմ, մուղեսաթ կաց վէրէն, չուր մէկ ինհնյք ինչին կէլնի: Պառաւն էլ մուղեսաթ մնաց չիմ ինն ամիս: Էդա աղջիկը էրկու խատ լած իպեւ Կանչեց ուր վարդապեան իպեւ, տարաւ ժամ: Էդա լաճերը կնքեց, ջոջ ախազօր անունը իտիր Սանասար, պստիկ աղպօր անունը իտիր Բաղդասար. իգեւ տուն կըշախէր: Էդա լաճերը օրէ օր կըջոջանին: մէջ չորս խինյգ տարւան էլան մէյ-մէկ ջոջ մարդմ:

Էդա կոսպաշտ թագաւորու կուռքեյը կըկանչեն թէ, էդա լաճերը պե, մեր առջև մատղի: Էտ էլ էլաւ մարդ յօդօրկեց մօտ էն աղջիկ, ասաց՝ քեռ լաճերը պեր մօտ մեր կուռքեյը մատղենք: Աղջիկն էլ ասաց Սանասարին՝ Սանասար, զնա մօտ թագաւոր, ասան, մե երեյք օր՝ օր տուր նոր մե տար մատղի: Ասաց՝ դէ հայդէ, ձե իրեյք օր օր տուրի: Ինոյքն էլ էլան էկան մօտ իրենց մէր:

Մէրն ասաց՝ տղայ, ինչ ասաց ձեւ: Ասաց՝ իրեյք օր մի օր իտուր: Մէրն ասաց՝ թէ որ ըսկուն ի (այդպէս է) էլէյք, կնացէյք Աղթամար, ձեր քեռու տուն: Տղէյները էլան, կնացին կնացին չիւմ ծովու պէրան. կնացին կայնան ծովու պէրան. ծովը պացվաւ, էլաւ ճամբախ, Սանասարն ի զարկ (խփեց) մէջ ջըրուն, կնաց: Բաղդասար իրիշկաց, տէսաւ, ինչոր ախսպէր խեղդուելու ի, խելք կնաց, ինգէւաւ էն տեղ, ամա Սանասարը կնաց մօտ ուր քեյոխն, Աղթամար: Քեյոխնը տեսաւ որ Սանասարը իկեր ի, ասաց՝ խէր էնի, ինչիք ես իկեւ: Ասաց, Քեյոփ, հալ կըսէն քեյ ասեմ, մե կըմորթի առջև կոքերաց, կանի մատաղ: Ասաց՝ առաքեյ խաչ պատարագին, թրի կէծակին, խանչալ նէրըլին, քուռիկ ջալալին, էն էլ խէծաւ, էկաւ էկաւ տէսաւ որ, ուր ախազօր խելք կնացեր ի, ինգեյ էտա տեղ, կանչեց, ասաց՝ Բաղդասար, քեյ ի՞նչ ի էլե. քիչմ ջուր պիրեց, իրեսը սրսկեց, էլաւ վեր: Ասաց, Ախսպէր, վէր էլի, ինգեր իր էսա տեղ: Ասաց՝ Տնաւեր. ես ասի

ծովը քեյ խեղղեր էր: Ասաց. Մօ տնաւեր, ես կնացի քեյուու տուն
էկաւ էլան, էկան մօտ իրանց մէր: Մէրն ասաց. Կնացիք մօտ
քեյոին, էկամյք: Ասին՝ խա, ասաց՝ ինչ ասաց քեյոին: Ասաց՝
խաչ պատարագին խուռը, թուրն կէծակին, խանչալ նիհըբ-
լին, քուռիկ ջալալին: Մէկէլ առաւետուն էլան՝ կնացին մօտ
թագաւոր: Ասաց. թագաւոր, դէ մե տար մատղի առջև քեռ կուռ-
քեյրաց: Թագաւորը առեց, կնաց. դէլ հալա լաճեր զաղն ին՝ կըռ-
քեյրն ասին՝ թէ էկա լաճերը մի պիրե, խերիք ի, մե զապուլ ի:
առ, տար: Ասին, չէ մե տի տանսե մօտ: Որ տարաւ մօտ, խաչի
դորութիւնից, կրակ պանեց, կոքեյր վառվան: Էնդուր որ կուա-
պաշտ թագաւորը իթող, էկաւ, ուր մարդիկ ժողվեց, ասաց՝ թէ
էկէյք թագպիրուն անենք, էսա լաճեր մե բիթիւն տի սպանեն,
բէօշ պան ի, ասաց հապա ինչ անենք: Սսաց՝ պիրեյնք Սանասա-
րը յօդորկենյք Մըրը, թող խարաջ ժողվի: մենյք Բաղդասարը
ըստեղ սպանենյք, թէ չէ մենյք չենք կանայ վէր ինոնց: Մար-
գըմ օղորկեց Սանասարն իպե, ասաց՝ Սանասար, կիտես քեյ ին-
չի հմ կանչե: Ասաց. Զէ, վալլահ: Քեյ տի յօդօրկեմ Մըրը խա-
րաջ ժողվես: Դօրիս դարձաւ, էկաւ տուն: Մէրն ասաց. Քեյ ին-
չի էր կանչե, էն անաստուած թագաւոր: Ասաց. Մարէ, ձի կասի
կնա Մոըր, խարաջ ժողուի: Մնաց չիւր առաւետուն, էրթալու
ժամանակ ասաց. Սանասար, կնա քեռ ախազօր կանչի, կես ըս-
տեղ: Կնաց ախազէրն առեց իպե մօ մէր (մօր մօտ): Մէրն էլ է-
լաւ մատնիկմ իտուր Սանասարին, մէկն իտուր Բաղդասարին,
ասաց. Մտուցէյք ձեր մատ: Մտուցին իրենց մատ: Ասաց. Դէ,
տարէյք ձեր մատնկներ փոխէյք: Փոխեցին: Ասաց. Սանասար՝ տիւ
կերթաս Մըրը, օր իրեյք դան կերիշկաս վէր քեռ ախազօր մատ-
նկին, խետ որ ինոր ակը սիվցեր ի, կիտցած էնես, որ էնիկ
նեղ տեղն ի, որ տեղ որ էնես էնդուց զառնաս: Ասաց. Բաղդա-
սար, տիւն էլ կըմաս էստեղ. տիւն էլ օր իրեյք դան իրիշկաս
վէր քեռ ախազօր մատնկին, խետ որ ինոր ակը սիվցեր ի, տիւ
էլ զօր կէնիս, կէրթաս քեռ ախազօր խասնես: Կիտցած էնիս քեռ
ախազէր նեղ վիճակի մէջ ի:

Ինչ Սանասարն էր, էլաւ, կնաց Մսըրայ դեխ, ինչ Բաղդա-
սարն էր՝ մնաց ուր մօր մօտ: Խետ որ Սանասար կնաց էն մէկէլ
օր կուապաշտները էլան, Բաղդասարն առին կնացին Բալաքուկայ
սարեր, հօթն տարբուայ թթու արադ գիյնին կապեցին վէրէն,
խելքը կնաց. ինկեաւ էտա տեղ. առին գիւրզերը ինկեան վէրէն
էլան ինե: Սանասարն էլ, Մարայ ճամբախ որ կէրթեր, իրիշկաց
որ ուր ախազօրը ակը սիվցեր ի: էտա տիւցէն զարձաւ իր տուն.
ասաց. Մարէ, ձւր է իմ ախազէր: Ասաց. Որդի, էն օրդէ ինչ տիւ

կնացեր ես. Բաղդասարը տարած ի Բալաքուկայ սարեր. սպաննած են, չեմ գիյտե. Թողած են չեմ գիյտե, թշեց, կնաց Բալաքուկայ սարեր, տեսաւ որ ախալէր կտան յառջն գիւռողի, կանչեց, ասաց. Բաղդասար, էլի վեր, քեյ ինչի էլե, տնաւեր. Ասաց. Ես քյներ ի: Ասաց. Տիւ խօրօտ իր քյնե, վալլահ, ես որ գէօր մէլ որ չխանի, քեյ խօրօտ քիւն շանց կիտին: Ասաց. Ինչ էլե: Ասաց. Կուապաշտները, քեյ կսպանին, ինչ էլե: Մէ զիր Բաղդասարը էլաւ վեր, ասաց. Սանասար, աիւ խոռոմի, ես գերնդիմ: Էտա կուապաշտի երկիր ըսկուն կտրեցին սրով, նա մարդ, նա կնիկ, նա տղայ չթողին, էկան ուրինց մէրն առին վարդապետի խետ կնացին:

Կնացին ուրիշ երկիրմ. մէյ չօլ դաշտմ՝ ըռաստ իրե ինոնց, ասաց. Ահա մեր տունը շինենյք ըստեղ, ելան ուրինց տունը շինեցին: Են քեարն ինչ Բաղդասար կըպիրէր, չէր կանայ վէրուցե: Ասաց. Որ ըսկուն ի տիւ քեռ կողին շինի, ես էլ իմ կողին կըշինեմ: Դօրիս էն ուր կողքին շինեց, էն ուր: Շինեցին, պրծան, բադան քաշեցին տան պիւլոր, դարգեախ դրին վէր զռան: Սանասարն ասաց. Բաղդասարը, կնա վէր ճամբիին, որ մարդ ինչ կըտեսնաս՝ պէ, թող մեր տանը անուն դնի: Բաղդասարը էլաւ, կնաց մէյ խալիւրմ ռաստ իրե, առեց, էկաւ Ասաց. Մեր տան անուն դիր: Խալուրն էլ, առաւօտէ չիւմ կէսօրին, ջորով ինոնց տան պիւլոր Փոաց, ասաց. Վախ էսա սասուն քեարերը ինչին էք դրե վէր իրերաց: Ասաց՝ որ ըսկուն ի, մեր տան անունը մնաց Սասմայ տուն իրենյք նատան էղա տեղ, օրն իրեք դան, ինչ մէրն էր, կէրթէր ժամ, ինչ ճժերն ին՝ մօտ վարդապետ տաս կառնին, իրեկունը մէ մէկ կերթէր, ուր տեղ կըքյնէր:

Օրմ Պղնձէ քեաղքիյ թագաւորու աղջիկը, անունը Զմշկիկ Սոլթան էր, ռամդար էր, ռամ կըթալէր. ռամ էթալ վէր Սանասարի քեօչկին: Գիյրմ գյրեց, իդուր ուր խաւքին ասաց. Էսա թուղթ տանես, թալես Սանասարի յօդէն, մէջ թղթին գյրեր էր, Սանասար, էսա թուղթը իրիկուն կը խառնի՝ առաւտուն գեաս, առաւտուն կը խառնի իրիկուն գեաս: Խաւքն էլ թուղթն առեց կնաց, տարաւ որ թալէր Սանասարի յօդէն, չըգիտցաւ, իթալ Բաղդասարի յօդէն: Բաղդասարը առաւտուն էլաւ, իրիշկաց, կըխի (կըտեսնայ) թէ թուղթմ կայ վէր ուր տեղաց:

Թուղթն իպաց, կարգաց. թէ Զմշկիկ Սոլթան յօրեր ի շատ բարեկ Սանասարին, էսա թուղթը խետ որ կառնեա, գեաս ձի տանես: Բաղդասարը ասաց. Վայ, իմ ախալէր ըիւա ձի (առանձ ինձի) կնիկ կուզի. ես ես տի մնամ սազ, ես էն: Առաւտուն մտաւ ուր յօդէն, չէլաւ տիւս, մնաց չիւր կէսօրին, վարդապետն ասաց. Սանասար, մէր է Բաղդասար չէկաւ: Էլան կնացին մօտ Բաղդասար, Բաղդասարը նա էկաւ, նա էլ կըզրուցի, իրեյք որ ինչին որ

արին, նա ձեն իտու Ասին. թէ առ էսա թղթին վրայ գյրի, մէ-խեմ քեռ զարդն ինչ ի:

Թուղթն առեց գյրեց, ասաց՝ եա ես տի մնամ սաղ, եա իմ ախպէր, Մէրն էլ ասաց. Սանասար, դէ էլէք էնա տեղ, քիչմ թուանայ արէյք, էկէյք: Դօրիս ինչ Սանասարն էր՝ թուանով կը զանէր, ինչ Բաղդասարն էր, սպանելու կըզանէր Դօրիս Սանա-սարն ասաց՝ առ էսա զանելով ձի սպանեց. մէ կայնի ես մէկ խատ զանեմ: Մէկ խետ իգար, Բաղդասարի խելք կնաց: Մէրն իրիշկաց. չէ, Բաղդասարը մեռաւ. անիծիծ Սանասարին, ասաց՝ քեռ ոտներն թուռ ընկնէր, քեռ ձեռներն էլ թու էլնէր, քեռ աչ-քերն էլ կոր էլնէր, որ տիւ չըզանէր իմ գեառուն: Դօրիս Սանա-սարի ձեռներն էլ թիւլցաւ, ոտներն էլ թիւլցաւ, աչքերն էլ կուր-ցաւ, քիչմ մնաց, Բաղդասարի խելքն էկայ գյլօխ. իրիշկաց, տէ-սաւ որ ախպէր զեօտացէ, ընզեյր էն տեղ:

Ասաց՝ ախպէր, քեյ ի՞նչ էլաւ. ասաց՝ ինչ քեյ զարկի, մեր մէրը ձի անիծեց, ես կուրցայ:

Մէրը տեսաւ որ էրկու ախպէրը խետ իրար կըզրուցէին. էլմ էլ օխնեց, ասաց՝ թող ոտքեյը ժրի իմ գեառուն, թող ձեռքերը ժրի իմ գեառուն, թող աչքերն ժրեն իմ գեառուն: Ոտ-քեյը էլ, ձեռքերն էլ, աչքեյը էլ ժրան-էլան խտրաց էկան: Նորէն ասին Բաղդասար՝ քեռ դարդը ի՞նչ էր. էտա թուղթը իթալ առջե վարդապէտին, վարդապէտը կարդաց, հաւ կըսէնը էսպէս. ասաց՝ Աստուած քեռ տուն աւերի. ես իրիկուն քեռ մօտէն կնացի, քինայ, առաւտուն էլ շոտ էկայ մօտ քեյ, ինչ շոտ ես կնացի Պղնձէ քեաղաք, էն աղջիկը տեսայ, դարձայ, էկայ էսա տեղ, հալա չէր լուսէ: Ասաց՝ վակ գիտի էն ի՞նչ աղջիկ ի. հա թող ուր խամար գիյը գըյը, ես նա կէրթամ նա պան: Զէ, ասաց ախպէր, տիւ առատուն որ շոտ էլնես, էրթամ, որ չէրթամ, կասեն որ տիւ վախեցար: Սանասարը ուր ձինը քեաղեց տիւս, խօրօս թի-մարմ խտուր. թամփն իդիք վերէն, իր զիւրզն առեց, խեծաւ, կաստ Պղնձէ քեաղաքն արաւ: Թէ տարիմ, թէ ամիսմ ճամբախ կնաց, կնաց մէ երկիրմ էլաւ տիւս: Տէսաւ մէկ զոռպայ տուալմ պառկեր ի ջրի պէրան, կըկանչի կասի. եաման ծարաւ եմ: Խօշապայ զեյտն կապած պէրան դէլ ալա կըպօռա, կասի, ես ծարաւ եմ: Եա-ման խասէք: Զխօ կէլնեմ երկիր աւերեմ, պիթուն քեաշեմ սուր:

Սանասար ռահմով էր, ինոր ձէն չխտուր, իթող ընցաւ, կնաց: Շատ քիչ Աստուած կիտի, տէսաւ մէկ տուալմ էլ (էնտեղ) պառկերի, եօթ խատ ֆուն թային արած, կըթիսն, էն կուտի, կասի. Եա-

մաս, աչկէյք, որտեղ կտոր-մտոր խաց կայ, պիրէյք, չէ չխօ կել-նեմ աշխար կաւիրեմ:

Սանասարը ասաց, որ Աստուած քեռ տունն աւերի. Փախկիր փուկարէն, անօթի, սօված մեռաւ, էսա զյրող տարած աշխար զաւթե, դէլ կասի կտոր-մտոր կայ, պիրէյք, էղա դուցէն էլ քշեց, կնաց: Շատ կնաց, քիչ կնաց. Էն էլ Աստուած կիտի, տէսաւ մէկ տուալմ էլ պառկե թէմուզի (յուլիս ամիս) շուկիւն կըտողա: 40 խատ գօմշու կաշի քեաշած վէրէն, դէլ կասի, եամմն, ևս ցրառ մեռայ, էծու մէծու կաշի կայ, պիրէյք, քեաշէք վէր ձի, չխօ կէլ-նեմ աշխարմ կաւիրեմ:

Սանասարը ասաց. Հայ Աստուած քեռ տունը աւերի. ոընչ-պար, շվան, կալան պէօպիկ, անչարուխ մեռան, դէլ էսա կասի, էծու մէծու կաշի կայ, պիրէյք: Էղա տիւց էլ էլաւ կնաց թէ տարիմ՝ թէ ամիսմ՝ թէ օրմ՝ քշեց կնաց երկիրմ էլաւ տիւտ Տէսաւ որ հարիւր խատ մարդ գեռ էղա տեղ կայնած են. Թախումմ սիվտկայ մուրուս, մէկը կարմրամուրուս, մէկը դեղնամուրուս, ասաց. Պարեւ ձեւ դեղնամուրուս, սիվտկամուրուս, կարմրամուրուս մարդեր: Ասին՝ Աստծու պարին, խաղար պարով, կանաչ կտրիճ ջնէլ. վախ էսա խաւքմ կայ, կուգեայ կըկանչի, տիւ կինս կար-մըրամուրուս, մէկ էլ օր՝ դեղնամուրուս, մէկ էլ օր սիվտկամու-րուս, կուկես մեր չափին կըխանսես:

Ասաց. Գեեալո (այ մարդիկ) էսա որ քեաղաքն ի: Ասին. Պղնձէ քեա-ղաքն ի: Աստուած, ասաց, իսոր տուռ, իսոր տարգեախ մը տեղէն ի կմտնեն ներս, կէննեն տիւս, իսկի կէրէվայ: Ասացին. Մենք էլ չինք կիտի, թէ կանաս, բաղանից մտի ներս:

Սանասարն էր, մէկ տիր ուր ձինը քեաշեց, էդ էրկու աւուր ճամբախ կնաց. մէկ տիր էլ քշեց իրեւր ձին ինչծաւ, անուն Աստծուն արաց, զանգիւմ իթալ ուր ձիուն, թուաւ, բաղան ընցաւ, էն իտ-վանց իրեւ քեաղքի մէջ ուր ձիու զյլօխ պանեց մէջ քեաղքին կան իրեւ. ասաց՝ Տէր Աստուած, և թնչ անեմ, որ տեղ մտնեմ. Շատ քիչ Աստուած կիդի, կան իրեւ, կնաց խանջում տուռ, բարեւ իտու, ասաց՝ խանջի, տեղմ կա էսա գիշեր կօնախ էլնեմ: Ասաց՝ խա, քյրով պանմ ի, ինչու չէ: Խանջին էլ տեղմ շանց իտու Սա-նասար ուր ձին քեաշեց էնտեղ. ինքն էլ կնաց ուր հօտէն նստաւ չուր հէվարին (երեկոյ): Իրիկունը խանջին ուր կերակուր պիրաւ, կէրաւ. տի պարկէր, տէսաւ որ, քեաղայք քեաղքյով, ուրենց տան ճրագնները ընցուցին: Էլմէլ քեաղայք լու էր: Սանասարն ասաց. Խանջի, էսա թնչ լու ի. ճրագ չկայ, պան չկայ, մունջ լու ի կտույ, Խանջին ասաց. Տօ ես կիտնամ որ էսա վախկոտ տղէմ ի, ձորի մէջ կըքյնի, ջոջ էրաղներ կըտիսնայ, քու պէտքն թնչ ի, քեռ խաց

կեր, քեզ ջուր խմի, կնայ պառկի չուր առաւտուն, էլի ջայնըմի կնա, Սանասարն էր՝ էլաւ մէկ սիլէմ կպուց մըջ խանջու հերիսին, խէտ իզար խանջու վիզ քէթրվաւ, ասաց՝ թէ ասա՝ չխօ քե կըս-պանեմ, Խանջին ասաց. Աստծու սիրուն, իմ վիզ շիտկի, կասեմ, Սիլէմ քաշեց էն մէկ էլ յերես՝ վիզ շիտկվաւ Ասաց. Դէ ասս հա, աչքերդ կը խանեմ, Ասաց. Կասեմ, կասեմ, Ասաց. Սանասար, էսա մեր թագաւորի աղջիկն ի՛ Շմզկիկ Սոլթանի: Էյ, ասաց. էս թագաւորի եօլ կանոն ուսուլ նիզամ, ինչ գոյն ի. մարդ ի՞նչին էտա աղ-ջիկ չուզի, իտոր տնա, ինչ տանի, տհա մօտ ինուր խէր. տարմօտ ինոր մէր, ախր ի՞նչ կայ որու ձի մէկ մէկ տը պատմիս՝ չխօ քե կսպանեմ,

Ասաց. Ջանըմ, նա կնա մօտ խէր, նա կնա մօտ մէր, աղ-ջիկը ուր գյլիսու ի, ինոր շարթ (պայման) կայ, որ կատարեցիր՝ չխօ կանես: Ե՛, ասաց՝ խանջի, ինոր շարթն ի՞նչ ի: Ասաց՝ խօրոտ ջէէլ ինոր շարթն, ինոր գիւրզն ի, որ գեօ բերթի տակ, 360 կի-որը կը գեայ: Ով անուն Աստուծու անի, էտա գիւրզ թալի ուր ձեռքով, խանի բերթի գյլօխ, էնդուցէն թողնի հա մըրի մօտ, ինոր ոսկի մատնիկ գեօ մըրի գյլօխ, մարդ չկանայ չխօ էլնի ինոր գյլօխ: Էղա մարդուն ասաց՝ կտրիճ ձիմ տի էլնի, որ զան-կիւմ զանի, էլնի էտա մատնիկ պիրի. էտա գիւրչն թողնի, էր-թայ բերթի մօտ, էլմէլ զանդիւն զանի ձիուն էլնի բերթի գյլօխ, էտա գիւրզ սալլամիշ անի, զանի քաղաքիյ մէջ, էտա գիւրզու քեամուց թագավորու աղջկայ քեօչկի փէնջարի փարդէք, որ գոմշու կաշի են, տի կտրեն ինսն մէջ քեաղաքին: Աղջկը ըսկուն խօրոտի, որ ինոր լիս տի զանի մէջ քեաղթիյն, խալիսը տի շըշկ-ուն, տի ասեն տօ, ջանըմ էտա ի՞նչ լու ի Դասմ՝ տի ասեն, լուս-նակ ի, դասմ տի ասեն՝ արեն ի պոե, մենյը չենյը ակխե (արթ-նացէ), դասմ էլ տի ասեն կէծակ ի, ըսկուն լիս կտայ, դասմ էլ տի ասեն, չէ, ոլլա էտա մեր թագաւորու աղջիկայ փէնջարի կա-շիքն ի, փրթե, ինպե, ինոր խօրոտկութնի լուսն ի զարկե մէջ քեաղթիյն, էն մարզն էլ տի թողնի գեա, ուր տեղ քյնի:

Առատուն՝ թագավորու աղջկ տի էլնի դալալ տա կանչել, տի ասի, էսա մարդ մէկ ի, ով ի արեր, պիրէյք, հս էն մարդը տի առնեմ:

Դօրիսկան տիւ էլ կնա, ասա, ես եմ արե, էն էլ առաւտուն էլաւ, քշեց կնաց ուր ձինը տիւս քեաշեց, ասաց խանջուն, դէ էլի կնայ քեզ տեղ, քյնի. խառցումմ գեօ քեզնից կանեմ, մա քեյ ի՞նչ եմ արեր, խանջին իթող կնաց:

Սանասարը խէծաւ ձինը, գոզրու քշեց, կնաց բերթի տակ, տէսաւ որ աղորթմանց գիւրզ գեօ բերթի տակ, էտա գիւրզ, ա-

նուն Աստծու արաց, էթալ, իխան բերթի գըլօխ. շոտմ տառցաւ, խասաւ, մըիրի տակ, իրիշկաց վեր, ինչ տիսնայ, մըիրի ծէր չերէվայ, ծէրմ գետ գէյտին, մէյ գետ էրկիյնք. Մէկ տիր անուն Աստծու արած, զանգիւմ իթալ, ձինը թռաւ, գեազմ էլ պանցրացաւ վէր մըիրին, մատնիկ առեց, իջաւ, զանգիւմ իզար, թռաւ բերթի գյլօխ, էտա 360 կտրանոց գիւրդ վէրուց, մէկ ձեռնով իթալ, ինոր քեամուց, թագաւորու աղջկայ փէնջարի կաշիք կըտրան, ինզեան, ինոր լոս իզար մէջ քեաղքիյն. Սանասարն էլ իթող գնաց ուր տեղ, թահնայ պառկաւ, քյնաւ Առաւտուն էր, հարքեաշ ակխաւ, էլաւ վեր. թագաւոր դալալ իտու կանչել, ասաց՝ ով արե, թող կեա, իմ աղջիկ տամ ինոր, Հարքեաշ կը վաղէր, էն կասէր ես եմ արե, էն կասէր՝ ես Ըստրուս դալալ իտու կանչել ասաց՝ էլ մարդ չմեացե, թող գեա. ովա մէկմ ասաց՝ մէկ մարդ ի մեացե էն էլ գետ խանջու խան պառկեր ի:

Կնացին կանչիցին, պիրին, ասաց՝ խա, ես եմ արե, Ասաց՝ աղջկ, դէ ասա դէ ինչիս ես արե, Ասաց՝ ես կնացի մըիրի գըլխուց մատնիկն առեցի, թէ որ չես աւատայ, գյակօ (ահաւասիկ) մօտ ձիկ, էնաեղից էկայ, կնացի բերթի տակ, ձեր կտրանոց գիւրդ էն տեղն էր, առի, մէկ ձեռնով սալլամիշ արի, թալի բերթի գյլօխ, թռայ, էլայ էն տեղից թալի տակ, ինոր քեամուց քեռ փէնջարի կաշիք կտրան, ինկան տակ, թողեցի էկայ, գնացի իմ տեղ:

Թագաւորն ասաց՝ որ ըսկուն ի, արի մէկ էլ իմ առջն էտա գիւրդ թալ, գետ էլի բերթի գյլօխ, որ ես աւատամ: Սանասարն էլաւ կնաց բերթի տակ, անուն Աստծուն արաց, էտա գիւրդ էթալ, կնաց չուր բերթի գյլօխ, Էյ ասաց՝ աւատացի, որ տիւ ես արե, ասաց՝ կանաչ կտրիճ ջէէլ, Էյ ալա ասաց ձի, շարթմ էլ կայ պիտի անես, որ ես քեյ առնեմ:

Զի 40 Փէյրըզ փայլէվան կայ, ինոնց խետ գիւլաշ (գտեմարտ) տի պանես, կոխես, որ ես քեյ առնեմ: Ասաց՝ տիւ մէկ մէկ տի թօնես, թէ բիթուն մէկ տեղ: Ասաց, Զի մէկ մէկ գի թօնեմ:

Աֆանդըմ, առաւտուն էլան վեր, ինոյնք մէկ-մէկ էկան, գիւլաշ կըպոնի... մենյք էրթանք Սասմայ էրկիր վէր Բաղտասարին...

Բաղտասարն էր տառաւտուն քնուց վեր էլաւ, որ լվացվէր, ուր ախազօք մատնիկը ուր մատն էր, տեսաւ որ սիվցեր էր, ասաց՝ Մարէ, կտորմ խաց պիրէք ուտեմ. իմ ախազէրը նեղ տեղ ի:

Աֆանդըմ, դիրմ էլաւ քշեց, կնաց, թէ օրմ կնաց, թէ տարիմ, Աստծուած կիսի: Եր ձինը խէծաւ, կնաց էլմէլ մօտեցաւ էն տռալին՝ որ Ջւր կրխմէր, չէր խմեր կը պոռէր, համան պուտմ

չիւր կայ՝ կապէյք կեայ, Ասաց. Տօ հարքաշի ցանքեր չորցաւ, տիւ թիւր կուզես:

Համան թուրմ սրպեց վէր տռալրւ վզին, կտրեց: Էթալ հստեղ, ասաց՝ դէ առ քեյ ջուր, էնդուցը էլիթող կնաց, շատ քիչ, Աստուած կիտի, տէսաւ էդա տեղ մէ տռալմ պառկեր ի, որ Փռոն կ'պանի ինոր ձեռ չի տայ, դէլկը պոռայ կասի, եաման, աչկէք կուտ մուտ կայ, պիրէյք ուտեմ:

Բաղտասարն էր, թուրմ քեաշեց վէր վզին, ասաց՝ հարքեաշ անօթի, ծարաւ մեռաւ, տիւ կուտ մուտ կըժողվես: Էդա տեղից էլ իթող կնաց ժամանակմ: Կնաց խասաւ տեղմ տէսաւ տռալմ էլ պառկեր ի, 40 կօմշի կաշի քեաշեց վէր ուր կը դողայ, ճփ ճփ կանի, կասի ցռառ մեռայ, Աստծու սիրուն էծու մէծու կաշի կայ, պիրէյք: Թուրմ էլ քեաշեց վէր ինոր վզին, ասաց՝ հարքեաշ պօպիկ մեռաւ, տիւ էծու մէծու կաշի էլ կուզես: Էնտեղից էլ իթող կնաց մէ երկիրմ, տէսաւ բէօլիվկմ (խումբ) մարդ, կայնած էնտեղ, կարմրամորուս, սիվտկամորուս, գեղնամորուս: Ասաց՝ պարև ձե, կարմրամորուս, սիվտկամորուս, գեղնամորուս մարդեր: Ասին. Աստծու բարին, խազար պարով էկար, կանաչ կտրիճ ջէկը վաղ էսա կեախ, խամլմ կայ, կեգեայ կը կանչի, տիւ էլ մեր թարաֆէն կը խասնես: Դեալո, ասաց՝ Փլան օր, Փլան գիյշեր, մարդմ էկաւ ըստեղ, ձիաւոր էր, տիւ չի տինսե: Ասաց՝ ոլա էտա մարդը ինչ տիւ կասես՝ էկաւ ըստեղ, ինոր ձինը քեահէլ էր, զանգիւմ իզար, ընցաւ մէջ քեաղքին, չիւմ էսօր կէսօրին էլ ինոր գիւրզի ձէն Փիւռ կուզեէր, ալա կէսօրնովիտ շըմ կիտէ մէկ տիր ընդուցէն պոռաց, ասաց՝ Սանասար: Սանասարը ինոր ձէնը լսաւ, ասաց՝ հա իմ ախպէրն իկեր ի, չկանայ ընցնի:

Դօրիս Սանասարը գիւրզմ էթալ, մէկ մահլա (թաղ) բաղանը ծակեց, ճամբախ էլաւ:

Բաղտասարը խասաւ, զիւրզ պիտի առնէր, չի կարցաւ, կանչեց ասաց՝ էյ կարմրամորուս, սաիտակամորուս, գեղնամորուս մարդեր, էկէյք էրա գիւրզ վերցրէք, դրէյք վէր իմ ձիու քեամկին էկան էլան մէկ դէ դէ դէ, ոլա ճորով վերուցին դրին վէր ձիու քեամակին: Առեց, քցեց կնաց մօտ ուր ախպէր, չիւմ խասաւ մօտ Սանասար: մահլէմ ալիրեց, արոնը էլաւ լէշերը կը տանէր: Ասաց. Սանասար, մէկ կաց, տիւ կէրնդի, ես խոռոմեմ: Արիցին որ էտա քեալայք խողին խաւասար:

Կնացին թագաւորի աղջիկ առին, քէլէցին. Կնացին մօտ էտա գեղնամորուս, կարմրամորուս, սիւտակամորուս մարդեր: Պարև ձե, կարմրամորուս, գեղնամորուս, սիւտակամորուս մարդեր: Ոյ, ասին՝ Աստծու պարին, կանաչ կտրիճ ջէլներ, թէ տիւք սաղ սէլամ էլ մէլ տառցայք, էկայք, խէրիելյ. տիւք էլ, ասին Սանասար

Բաղտասար, տիւք էլ էսա աղջկայ խամար ենք իկե, բիւթիւն էլ թագաւորի զաւակ էք, էկէյք էս տեղ կոփ անենյը, ևս Աստուած խտու ձի, իտու ձե: Ասին՝ չէ, պնապարայք (շնորհաւոր) էլնի ձե. ասլ քեյի պապաթ, տար, Աստուած պնապարաք անի քեյ,

Մէսակ քեյլնից կը ինդրենյը, ու էդա աղջկան ասես, որ մե դարցուցի էն գեռնից, ինչ գեռնով որ ըստեղ իկերենյք: Աղջկն էք, սէյրին վէրուց ինոնց վրէյտերաց. ինոյնք մէ մէկ իր գեռն առին կնացին էլան առին կնացին Սամայ երկիր: Սանասարը Բաղտասարին ասաց՝ խոր խամար էք որ սկում կասէր աղպօր մօտէն կոփ կուզեմ: առգեյ խամար, խալալ սրտով: Դէրուո պիրին պսակեցին վէր Բաղդասարին: Սանասարն էլ ժամանակմ էլ մնաց, ըսկուն մնաց: Ինչ Սանասարն էք մնաց արեելք, էլաւ թագաւոր: Ինչ Բաղդասարն էք՝ կնաց արևմուտք:

Դանայնք վէր Սանասարին, ինոր լաճմ էլաւ, անունն իտի Առիւծածն Մէէր: Որ Մէէրը էլաւ մեծացաւ՝ Սանասարը մեռաւ: Մէէր ջոջացաւ, պսակւաւ Մէէրն էլ մէկ ժամանակ մնաց. Մէէր էլ ինչ կանէր, դայիմ կէէր Ծև սար, Մսրայ սարեր նէճիր կանէր: Դօրիսվան Մէէրի կնիկն ասաց Մէէրին, դէ, կերթաս Մսրա սար, Մսրա Մէլիքի կնիկ կուգեայ էստեղ, չենեմ չիմանամ ինոր խետ խառվես Մենյը սամտար ցեղ ենք, ըըմէն պան կիմանամ ինկ Մսրա Մէլիք ուր կնկայն կասէր, կնա մեր սարեր խետ Մէէրին խառուի, ինոր ջընս զախմ (ուժեղ) ի, պալքի մե ինոր պէս կարիճ լաճմ էնի:

Կնիկն էք, էլաւ կնաց սար, ըսկուն արաց չիւմ Մէէրի խետ խառվաւ, իթող էկաւ: Մէէրն էլ կնաց ուր երկիր: Տարիմ մնաց Մէէրին լաճմ էլաւ, անունն իտի Դաւիթ: Դօրիս չքեաշէց ամիսմ Մէէրն էլ ուր կնիկն էլ մեռան:

Մէէրը որ Մսրա Մէլիքի կնկայն խետ խառնվեր էք, Մսրա Մէլիքը մեռաւ. ինոր հետև լաճմ էլ ինոր էլաւ, անունն զըին էլմ էլ Մէլիք-Մէէրից: Դորսվան Մէնով Յօվան, ինոր խօրօխպէր, Աստղիկ պարոն, էկան մէկտեղ, ասին՝ ինչին անենյք որ էսա ճիժը շախւի: Աստղիկ պարոն, Մէնով Յօվանին ասաց. էլի առ կնա Մսրը, Մսրայ Մէլիքի կնկայ մօտ, ինոր խորթ Մէէրն ի, ինորն էլ թող շախի, ինորն էլ, մէ խենյք ինչին կէլնի: Ենոնվ Յօվանն էք, էլաւ Դաւիթ շլկեց, կնաց մօտ Մսրա Մէլիքի կնիկ, ասաց. Մէլիքի կնիկ, վոլա Մէէրը մեռաւ, իր մէրն էլ խետ, էսա ինոր ճիժն ի, պերիրեմ որ տիւ շախւս: Դօրիս Մէլիքի կնիկ Դաւիթ իթալ ուր ծծեր, արեց չարեց Դաւիթ չը ծծեց: Իպէ կաթով, շաքրով էդա տղին ջոջացուց, չիւմ մեծացաւ: Որ Դաւիթ ջոջաւ, դօրիս Մսրա տղէյներ կը ժողովէր, կէրթէր կը խաղէր: Կը պանէր

բարդի ծառեր, կը կօռէր, կասէր, տղէյներ էկէյք տընկօզալ խաղցէք: Ինչ տղէյները կէլնին ծառի վրէն, մէ տիր կը թօղնէր, հըմէն շուռ կառնին գէյտին, որն ինչ կը մէռնէր, որ ինչ թև կը կոտրէր, որն ինչ դյօխ: Դօրիս հմէն օր մարդերը կըցուին որ Մէլիքի կնկայն կասին, տօ էղա ինչ հէթիմ ի կը շախես, մե մեր ճժէ կտրցուց: Դօրիս Դաւիթ հմէն օր կէրթէր հոլ կը խաղէր, հիրիկւան Մէլիքի կնիկ ասաց՝ Մէլիք, էսա տղէն տար խետ քեյ. քեադրյցեր գեանգեատ կանեն, կասեն մե տղէ կտրցուց:

Առաւտուն Մէլիք առեց Դաւիթ տարաւ խետ ուր. մէյդնի գյօխն նստեցուց, ասաց. Տես, Դաւիթ, տիւ ճիժ ևս, չմտնես միջ մէյդնին: Դաւիթ նստաւ սարի գյօխն չիւմ հիրիկուն: Իրիկուան փայտոսի հօլն էր, որ Մարայ Մէլիք տի զանէր, ասաց՝ իրիշկացէր մարդ չէնի յառջն, էսա մէկն ի, զանեմ, էրթամ: Իրիշկացին՝ ճիժմ գեօ նստեն ինոր հօլի ակօս:

Տօ ասաց՝ կնացէք, տեսէյք էն հէթիմ վովի, խանէյք վեր, ես գիւրզմ կը զանեմ տաս խոզի կնացին, արին չարին, չկարցան խանին վեր: Եկան ասին՝ Մէլիք, ուզա Դաւիթն ի, նա կէլնի վեր, նա պան: Տօ ասաց՝ թողէք՝ ես գիւրզմ զանեմ, էն տան մնայ խալխի ճժեր կսպանի, զեայ ըստայ, կէլնի մե թալա. թողէք սատկըցուցեմ:

Մարայ Մէլիք գիւրզն իզմար, ինչ իզմար Դաւիթն ուր ձախ թև իսուր առջն, էթալ, հօլը էկաւ երկու ամսվայ ճամբախ, վէր Մարայ Մէլիք վէր կնաց:

Ինհնաք զըմէն զարմացան, տէսամը Մէլիք, տիւ կասիր վէր ձի վեր զախմ մարդ չկայ. Ինչիսի Մէլիքից էլ սկում իրե, ասաց՝ էյ, ձե թնչ, իմ ախազէր չի՞: ախըր մեր անիցն ի, տիւ չէք: Դօրիսվան Դաւիթն էր՝ էտա տեղից էլաւ, փախաւ, կնաց տուն: Ասաց՝ Մարէ, քուրսին դիր, ես խիւանդ եմ: Մէլիք իրե, ասաց՝ Մարէ, հուր է էն հէթիմ: Ասաց՝ որդի, գեօհան խիվանդ ի, մտե քուրսու տակ, կը գողցուցի: Կը գողցուցի՛, ասաց՝ խան վեր, ես ինոր կսպանեմ: Տօ որդի, ինչի կսպանեն, էն քեյ թնչ ի արե: Տօ թնչի ինչ ի արե, էն իզար իմ գիւրզ վէր ընցուց, կանդար Մարդերը վէր ձի կը ծծդղան, տօ մէր մեռնի, հալա էն ճիժ ի:

Ասաց. Խան վեր, տի սպանեմ, չըմ կիտե, չարա չկայ, տի սպանեմ: Ասաց՝ պե ջապենյք, թէ ինոր խելք պանից չըխասնի, չիօ ճիժ ի, թէ չէ սպանի, Ասաց՝ ինչի տի ջապենյք: Ասաց. Թէպամիմ չամիչ մէկ կրակ դիր առջն, թէ չամիչ կէրաւ, չիօ խելք կըխասնի, թէ կրակ, չիօ չը մէզե: Պերին թէպսիմ կրակ, մէկը չամիչ, դրին առջն, դէրուս էնիկ ձեռ պարզեց որ չամիչ տանէր,

Խրիշտակներ ինոր ձեռ պռնեցին, մտուցին մէջ կրակին, Կրակա-թաթախ ձեռը տարաւ պէրան, լեզունը իրիցաւ:

Ահա, որդի, ասաց՝ որ ինոր խելք պանի խասնէր, էնիկ կրմէ կուտէր. ինոր խամար էլ անունը զրին թլու Դաւիթ:

Ասաց. Զկիտեմ, մարէ, քեռ խաթրի խամար չըմ սպանե, ալա օրօխկի թող էնա ինոր երկիր, Մէրն ասաց՝ ալա որդի մէնակ ճիժի, ինչին տօրօխկենք էրթայ: Ասաց. Թօ էրթայ, ես եմ դռնապանները Օղան, Դողան կըտնեմ խետ էլաւ Օղան, Դողան խոր խետքեր և թամափ արաց, ասաց՝ կըտանէք Պաթմանայ կարմունջ, թալէյք ջուր տանի: Դօրուս Օղան, Դողան էլաւ Դաւիթն առին կնացին:

Կնացին Պաթմանայ կարմունջ, որ արին Դաւիթ տի թալին ջուր, Դաւիթն էլ ձեռ էթալ մէկ ինոր թն, մէկ ինոր, պռնեց, ասաց, տիւ ձեռ կըսատկըցուցեմ. ինոյնք բախտ թալին, ասին՝ Դաւիթ, տիւ մեռ մի՞ թալե ջուր, ինչ էրթայնք էն շան խզմաթ անենյք, կուգեանք քեյ խզմաթ կանենյք, Դաւիթը էլաւ առեց Օղան, Դողան, կնաց Սասում, իտի վէր Սասումայ դռան դարգեավանչի: Զինքն էլ ինչ կանէր, էլմ էլ խետ ճժերաց կէրթէր պախչէք, բարտի ծառերը կըկոնէր, ճժերը կըդնէր վէրէն, կըթօնէր շըմէն կըլէցվէն գէյտին. օր խարիս, օր խաղար կըմեռնէն Շէնով Յօվան ասաց. Պերէյք ինոր հաղ տէյք: Ինոր հաղ տէին, Դաւիթ մնաց տուն, էն մէկէլ օր, էլմ էլ ժողվեց ճժեր կնաց պաղչէք, ծառերը կոռեց, ճժեր իլից վրէն շուռ իտու գէյտին. էլմ էլ էկան վէր Շէնով Յօվանին գանգատ: Շէնով Յօվան ասաց. Պապօ, պերէյք խօվութեն տայնք Դաւիթին: Պիրին Դաւիթն արին խօվիւ:

Դաւիթը ոչխար տարաւ գմշտ, ինչ կանգմար աղուէս, լապրզտրակ կէր ժողովեց, իլից մէջ ոչխարին. իրիկուն առեց իպե գիյդ. ասաց՝ էյ գիյդական, էլէյք վեր, մէկ մագիյ կայարերեմ չորս: Գերզական էկան մօտ Յօվան, ասին՝ մե լազըմ չի. Յօվան ասաց՝ դէ պիրէյք Դաւիթ հաղ ժողուէք, տուէյք: Ժողուցին տուփն, Դաւիթ մնաց տուն: Առաւտուն էլաւ ուր նետ վանեղ առեց կնաց պառու կորեկի առտի մէջ, լոր կսպանի: Էնտեղէն Մորայ խարաջ ժողվողները էկեր ին եօթ տարւայ խարաջ կուղին: էկան պառուն ասին. Պառաւ՝ Դաւիթ քեռ կորեկ պիթուն փռեց գէյտին:

Պառաւն էլաւ անթերոց իտի վէր թկին, կնաց խասաւ կորեկի առտի մօտ, պոռաց՝ ասաց՝ լամ քեռ կանաչ արե, տիւ ինչ կանես: Դաւիթ ասաց՝ ինչ ինչ, պառաւ, ախ ասաց՝ պառաւը, եալի միս եմ կիրե, քեյ տի օխնի, իմ լեզուն լպսարաց, իշունց

տուի Ասաց՝ կնա գե Մորա Մէլիքի խարաջ ժողվողները էկած ին գե մեր խղենի մէջ կըշափեն։ Դաւիթն էր՝ վաղեց տեսաւ որ գե խղենի մէջ ոսկի կըշափեն։ Ասաց՝ տուէք ես կըշափեմ. առեց չափ, շուռ իտու, ոսկին իլից վէր չափի ոռին։ Ասին՝ տօ էսա ծուռ հէթիմ թնչ կանի, ասել էր, շուռ համան պռնեց եօթ մարդ, լեզուն էլ քեաշեց իդի վէր ճակտին, մէ մէ ատամ իզար վրէն ասաց՝ կնացէյք Մէլիքին պարև արէյք։

Դօրսվան ինսնյը էլ էլան թողին կնացին։ Խասան Մորա դմալու Մէլիքը ուր վաղիր Կուզպատին նստէց էն, Կուզպատին ասաց՝ Մէլիք, մէ խաս դօլիխնդ դիր իրիշկա խեմ, մեր մարդերը չէկան։ Մէլիքը դօլիխնդ իտի իրիշկաց, ասաց՝ ոլա մեր մարդերը ուրախ ուրախ ծծկատալէն կըդեան։ Թիչմ էլ էկան դօրուց, առեց գօլիխնդ իրիշկաց ասաց՝ Մէլիքը, մեր մարդեր աջէպ կըդեան, պէրանքտեր մնացեր ի պաց, ցալինք (լորցունք) պէնից կթափի տակ. Էկան թնչ, լեզուկ կացած ճակտա, ատամներ զարկած վրէն։

Ասաց՝ էսա վով ի արե, ասին՝ թլոլ Դաւիթ կայ էնտեղ, էննի արե, կրկին դառնանք վեր Դաւիթին։ Դաւիթ էլմ էլ կնաց մէջ պառվու կորկէ առատին լոր կզանէր. էլմ էլ էկան պառւուն ասին, Դաւիթ գե մէջ քեռ կորկէ առատին լոր կսպանի. Պառաւ վաղեց, լավահի արաց, ասաց՝ Դաւիթ, թէ ես մեղք եմ, տնաւեր, կնա Սասմայ սար, գե քեռ խօր նէջրատեղ, կաց էնտեղ. տիւ իկերես իմ կորկի մէջ թնչ կայ, էն էլ ասաց՝ քեյ կուցմ ոսկի պառաւ, հածի խելք սովորեցու։

Դաւիթ կնաց մօտ Ծէնով Յօվան ասաց. Խօրօխպէք, գէյլի էրթանյը իմ խօր նէջրատեղ, ձի շանց տուր, չխօ քեօ, վիզ կըքեաշեմ տիւս։ Էլան կնացին, տէսան գոռայա բաղամ գեռ խոր խէրը քեաշեր ի, հին վէրու ոչխար արե, զայիմ կէրթար ինե նէճեր կանէր։ Ասաց՝ տօ խօրօխպէք, էսմ ի իմ խօր նէջրատեղ (որսարան) պռնի քեյ խամար, մէկէլ ես կըթօզնեմ թօղ էրթան։ Մարդ որ նէճերը չըլարի տանի Արդօս, Սիրան, պիրի լվավէք, Գեալսասան, թնչի, մեղք ի էսա իզսիրներ սպաննեմ։

Դօրիս իթող պիթուն կնացին։ Բագանները քակեց, մէկ խատ չմնացին։ Դօրիս իրիկուն պառկաւ քիսաւ, իրեյք դիր քիսաւ, իրեյք տիր տէսաւ լոս էր կաթե վէր ուր խօր գերեզմնին։ Դօրիս ասաց՝ վէր իլի խօրօխպէք, վեր իլի, էսօր լոս ի կամարի կաթե։

Առաւտուն էլաւ, կնաց, պռնեց պսկում քեառսուն ուսթայ, իրեյք խարիր պանւոր մէջ շիւմ հէվարվան (երեկոյ) Մարութա պանձը Աստուածածին շինեց, կայնըցուց։ Իտիր ինե քեառսուն վարդապետ, քեառսուն սարկաւագ, քեառսուն գալիր։ Իտոյնք մնացին էնտեղ։

Դաւիթն էր՝ կնաց Օղան, Դողան իպե կայսցուց վեր դռան։ Մենյք դառնայնք վեր Մըրա Մէլիքին։

Մըրա Մէլիքը էլաւ ազքեար ժողովեց որ տգեյր վեր Դաւիթին կոփւ Կուզպատին ասաց՝ տօ ազքեար ինչ տանի, ես մէնակ կառնեմ իրեյք մարդ, կէրթամ Դաւիթ կապանեմ, ինոր աշխար կըքեանդեմ կուգեամ։ Էլաւ խէծաւ ձին, էկաւ դեխ Դաւիթ, Մարութայ պանցը Աստուածածին։

Էկաւ ճամբախ, մարդմ պանեց, ականջներ կտրեց իթալ իր ջօմ՝ իրեւ Քշեցին էկան վեր Մարութա պանցը Աստուածածնայ դռան։ Օղան, Դողան կանչեցին, ասին՝ էյ եասաղի, տեղը կըգէյք։ Ասին՝ տօ մենյք ձեր տէրն ենք սպանէ, խանին ականջները թալին առջև։ Դօրիս Օղան, Դողան աւատացին, որ ինոնց տէրը սպանուե. Թողին մտան ներս, կտրեցին քեառսուն վարդապետ, քեառսուն դպիր, քեառսունից մէկ պակաս սարկաւայդ մէնակ մնաց լէշերաց տակ, չտեսան որ սպանէն, էլաւ առեց քերօն, բուրգառ, մոմ, գնաց տէսաւ որ՝ Դաւիթ նստե նուան գեյնի կըխմի. Ասաց՝ իմ տէրն ի նստի վեր սողպթի, կըխմի նուան գեյնին, որ չսհաւատայ էսա փիլոնին, վարդապետին։ Դաւիթ ասաց՝ խունկն ի պակաս, թէ մոմ, տէք թօ տանի։ Սարկաւագ էլմէլ երգեց, ասաց՝ նմ տէրը նստի վեր սողպթին, կըխմի նուան գեյնին, էկան մեր վայնք կտրեցին, թէ որ չը աւատայ փիլոնի վա՛րգա՛պետին։

Էլմ էլ ասաց Դաւիթ, խունկն ի՛ պակաս թէ մոմ։ Էլմէլ ասաց՝ իմ տէրը նստի վեր սողպթին, կըխմի նուան գեյնին, մէկտիր արնոտ շապիկ էխան, էթալ Դաւիթի առջև։ Դաւիթի գեյնին իթող. Էլաւ բարդի ծառըմ քեաշեց, ինգեաւ իտևներ։ Ինչ քեառսուն մարդն էր սպանեց. հալա Կուզպատինի ձինը ութ ունանի էր, թռաւ գեյտ ընցաւ, փախաւ, ալա հախու բէրան քէթըրվաւ, աչքերը շլվաւ Կուզպատինին։ Դօրիս կնաց Մըրա ախզըին, կնիտէր տէսան Կուզպատին էկաւ՝ աչքեր շիլ, պէրան քէթը, ձըուղինք պէնից կըթափի տակ, ասին՝ ոյ, ոյ, ոյ Կուզպատին շակլապէրան, թէ տիւ կասէր՝ ես կէրթամ Սասուն պերեմ թալան. քեառսուն կօլօտ կնիկ պէրեմ էրկայնք աղան, քեառսուն հէրկէն կնիկ պիրեմ ըղտեր պառնան, քեառսուն կնիկ պիրեմ անուն Արտաղան։

Կուզպատին ասաց՝ ես կիցա դաշտեր գուրանին, ես չկիտցա քեարեր կապան, վազ, գեարնան գնտեր կըգեան գագանական. ձեր էրկնթերաց ճուռ պլոր կըպերին, արէյք ձե խամար եղ, չորթան. Մըրայ Մէլիքին էր ժողովեց որ էրթայ վեր Դաւիթին կոփւ Ամա՝ Դաւիթ էլմէլ իր նետ վ անեղ առեց կնաց պառու կորկի մէջ լոր կսպանի։

Եկան պառուն ասին, պառաւն էլաւ կնաց՝ հայ փոխմ լնմ քեր կանաչ արե, Դաւիթ ասաց՝ Բնէ, ախ ասաց եազի եմ կիրե, իմ լեզուն լպպարաց քեյ իշունց տուի,

Դաւիթն ասաց՝ դէ, պառաւ, թատպիրմ արա, կերթամ Մը-սըր կոփւ, չիօ կըգեամ քեռ վիզը կըկտրեմ, Ասաց, Բնէ անեմ, խաչ պատարագին, թրի կէծակին, խանչալ նըհըլին, քուռիկ ջա-լալին, պօղպատէ կոտիկ (սաղաւարդ) պօղպատէ ջզմա, պօղպատէ քեմամար կայ, Ասաց՝ Պառաւ, դեմը ի, Ասաց, Կնա քեռ խօրօխազօր մօտ, խարցնի, Էն կիտի դեռը ի, Կնաց ասաց խօրօխազօր, հմւր ի եմ խօր խաչ պատարագին, թրի կէծակին, խանչալ նէհըլին, քու-ռիկ ջալալին, պօղպատէ կոտիկ, պօղպատէ ջզմէն, պօղպատէ քեմ-մար:

Ասաց՝ Հըմ կիտի դեմը ի, Ասաց՝ Հըմ կիտե, խօրօխազըր, ես ձի շանց կտաս, ես քեզ կսպանեմ, քեռ վիզ կըկտրեմ, Ասաց՝ տղմ, Հըմ գիտե, քեռ խէր լցի մըջ տան, էսա քեառասուն տարի ի գիյդի մոլիր կըլցեն վրէն, կէրթան հէրտսից խոտ, հարթ կու-տան, Էն էլ էկաւ փողոց խոռու փորել, թրի կէծակին, խաչ պա-տարագին, խանչալ նէհըլին, քուռիկ ջալալին, պօղպատէ կիտիկ, պօղպատէ ջըզմէն, պօղպատէ քեմամար էխան տիւս:

Ջինը քեաշեց տիւս, խօրօտ թիմարմ խոռուր, լվաց, թօռ-պէն քիլէմ (8 չափ) ցորեն իլից, կախից վզէն, խնոր մէկ դան մէկ քիլա էր, էկաւ խօր կուտիկ (սաղաւարդ) իտի գյլօխ, սկում ջոջ էր որ քեառասուն կիտր պամպակ իտի ինե, ջօրօվ էլաւ ինոր ոյլխով:

Խնոր խօր քեամամր եօթ փաթ (տակ) փաթութեց ինոր մէջը, նոր խասաւ, Չաքմէքն էլ քեառասուն կիտր պամպակ խնեց, ջօ-րով (հազիւ) մտաւ ոտ:

Դօրովան (յետոյ) կնաց մտաւ ձիու մսուր իլաց: Աստուած ձիուն լեզու, խոռու, ասաց՝ տօ, մարդ, ինչ էլմ էլ հիսնի ձէն ըն-կաւ իմ ականջ, էսա քեառասուն տարի էր, որ ես հիսննի ձէն չէր լսե, Ի՞նչ կայ որ կըմս: Դաւիթն ասաց, կէրթամ Մըսըր կոփւ Ա-սաց՝ կնա, ալմ ճամպախ հր տեղ որ ես կը չօքեմ, իշնես տակ, լվացվիս, նոր էրթաս: Մը վախենայ, էլաւ խէծաւ քիւռիկ ջալա-լին, շատ քիչ կնաց, Աստուած կիտի, կնաց մէկ նեղ առում ուստ-իրե՝ ձինը չօքերը իզար գեյտին, զանգիւմ իզար, ասաց՝ հայ քու տուն աւերի, քու տէրը մեռնի, տիւ ձի հարէն (կատաղի) ծո-վերն անցուցած էր, էսա հառումի՝ կըչօքեմ:

Զիուն լէզու էլաւ, ասաց՝ հայ Աստուած քու տուն աւերի, թէ ես քեյ ասի, ես որ տեղ կը չօքեմ տիւ իջի. ձեռաց իջաւ տակ, ձինը շիտկեց մէջ չիթին, Դաւիթն էլ պառկաւ, քինաւ:

Գետ քեռ խօր կաթնան ախպիւրն ի, ձինը ասաց՝ էսա քեառսուն տարի ես պրաւաւոր ի, թող մէկ անուշ իմ քէփով խմեմ, տի մէջ լօխկնամ. էլաւ լօխկցաւ, պառկաւ էլի քյնաւ.

Կէս օր էր, ակխաւ, բնչ տեսնայ, կիւտիկ գյլօխ ճիթեր ի, ուաքեր ճիթեր ի, քիչ ի մնացե պատռի էլաւ քեակեց պամպկներ, կիւտիկց էխան տիւս, ջօրով մտաւ ինոր գյլօխ. չզմէքն էլ էխան տիւս: Էտա քեամըր որ եռթն փաթ էկեր էր ինոր մէջաց պիւր, քեակեց, մէկ փաթ ջօրով իսաւաւ: Տօրիս էլաւ անուն Աստծուն արաց, քէյլեց կնայ Մսրա երկիր, Կնաց տեսաւ Մսրա դաշտ, չատրներաց խէսապ չկայ, աստղերաց կայ: Է՛ս վախես էլնեմ կառահօլ (փոթորիկ) քեամի, իսոնյք էլնեն կանգրաթուուկ (չորցած կանգառ) չեմ կանայ վըր իսոնց: Ձինը ասաց՝ Էյ, մի վախենայ, ըսկում որ տիւ քեռ թրով սպանես, ըսկում ես իմ ուաքերով կսպանեմ: Խնչքան որ տիւ քեռ ձեռքերով սպանես, ըսկում ես իմ պոչով, իմ գյլխով կսպանեմ: Հալա տիւ առաջ ակախ արա, չասեն Դաւիթ գողութնով էկաւ:

Դաւիթն ասաց՝ որ քնած էք, ակախ կացէյք, որ ակախ էք՝ ձեռանք թամբէյք: Դիրմ Դաւիթ խէծաւ ձին քշեց, աջու կնաց, ձախու իրե սրպեց ոսաց որ, արուն էլաւ լշշեր տարաւ իլից ծով: Դօրուս էնդիխէն մէկմ էկաւ ասաց՝ Դաւիթ փօշ, փօշ, փօշ: Դաւիթն ասաց՝ մանկեար ես փուշտ եմ (սրիկայ), ասաց՝ մեռնեմ քեյ, մեր լիզուվ, եանէ (այսինքն) փօշ, կեցիր, խէրիք ի: Դաւիթ, մեռնեմ քեյ, մենք մէկ ախպէր ենք, տիւ բնչի մե կսպանես: Կնաց գեռ հան քեռ դուշման. գեօ էն կանաչ չատրի տակ, քեառսուն լիտր առճին կախած ինոր չատրի յառքից, ինչգեախ պէնք (շունչ) կը խանի, քեառսուն կիտր առճին կըլուպուցի յառիք:

Թշեց, կնաց չատրի դուռ, կանչեց Մէլիքին, ասաց՝ Մէլիք, իլի վեր, եան Աստծուած տա ձի, եան տա քերդ: Մէլիք ասաց՝ արի ուտենք, խմենք, նոր ըլինենյք կոիւ անենյք: Դօր չասես, ես կնացի իմ ախպօր երկիր, ձի խացի թայլիփ չարաց: Իպե նըստցուց քեառսուն տարւայ գիյնի կապեց վրէն, սարխօշցուց, պանեց կապեց սան վրէն, թօ մնաց վաղ՝ որ սպանէր:

Դօրիս ինոնց երկիր, Սանմայ երկիր, իրիկուն Աստղիկ պարէլաւ տիւս, որ աստղագէտ էր, իրիշկաց աստղեր, տէսաւ որ Դաւիթի աստղը խաւարեր ի: Ասաց՝ Յօվան, արի, մեր Դաւիթի աստղ խաւարեր ի:

Մէնով Յօվան իրե, ինոր ձինը քեաշեց տիւս, ինոր ձիու անուն Սըզօր էր, ասաց՝ Սվօր. քեանի սհաթ ձի կըխանես առջև Դաւիթին Ասաց. Իրեյք սհաթ քեյ կըխանուցեմ դէմ Դաւիթին: Ասաց. Սվօր, իմ ձեռաց եմ՝ քեյ կըխարամեմ, Դաւիթի աստղ խաւա-

բեր ի, էլ իրեյք սհաթ երը պիտի խանեմ: Ասաց՝ ոտ կուզու-
ղիկ խալիվոր, տիւ սկում կտրիճ մարդ ես, քեռ աչքերը խփիր,
քեյ կայիմ պանիր վէր իմ քեամքպին, Աչքերդ խփես, պանաս,
քեյ կըխասուցեմ դէմ Դաւթին:

Մորա Մէլիքն էլ պիրե եռառւն ճիժ, ժողվերի վէր Դաւթի
դուան, ասերի, ինչկեախ որ Ծէնով Յօվան կըպօւայ, տիւք էլ
պօւացէք, որ Դաւթի ինոր ձէնը չսիր «Ծէնով Յօվան» էկաւ կը-
նաց պանատան դուռ պօսաց ասաց՝ Դաւթի: Ինչ որ պօսաց Դա-
ւթի, ճժերն էլ պօսացին ասին Էյ. ասաց՝ չօս: Դօրուս ճժերը, ձէ-
ները կտրեցին, փախան: Ծէնով Յօվան մէկ տիր էլ պօսաց Դա-
ւթի, քրոջ քո տան, քեռ թեւի խաչ մոռցերես, Դօրին Դաւթի
ասաց՝ Յիշամ խաչ պատարագին, վըր եմ աջ թեւին, զանեմ կըտ-
րեմ զընշըներ, մէկ հայ հարաւային, մէկ հիւսիսային: Դաւթին
էր կտրեց էլաւ տիւս: Ասաց՝ Մէլիք, արի կորւ. էլան մէյդան, ա-
սաց՝ Դէ Մէլիք, ջոջ ախտէր տիւ ես, զայ իրեյք դըրպ տիւ զար:
Դօրին Մէլիքն էր, ինոր ձինը քշեց իրե չիւմ Խօշակ իրե իզար,
պանմ չարաց: Մէկէլ քշեց իրե իզար, պանմ չարաց: Իրէյք ան-
գամ էկաւ իզար, էլմէլ պանմ չարաց: Դէօր սրէն իրե Դաւթինը
Դաւթի քշեց իրե, խասաւ Սասուն, գարձաւ, որ արզանէր, ասաց՝
Դաւթի, էսա մէկը տուի Աստծուն խաթըր. Դաւթի ասաց՝ էսա մէկ
տուի Աստծուն խաթըր. հալա էրկուսը որ զանեմ, ես էրթայ գհաւ:
Դօրուս ինոր մէր, որ էնքան Դաւթին շախեր էր, ասաց՝ վիշնջա-
ռից. Դաւթի, ես քե շատ եմ շախե, էսա մէկն էլ տիւ ձի խաթըր
արաւ: Դաւթի ասաց՝ էսա մէկն էլ քեյ խաթըր, մէկն էլ տըզա-
նեմ: Դօրուս Մէլիք իպե ինչ արաց, մտաւ իր ձիու փորի տակ.
քեառսուն փալան, քեառսուն ջաղցի քար իսի վրէն, ասաց՝ պալ-
քի էսա մէկը զանի, չըկարի, չիւմ դիօր կուգեա ձի:

Դաւթին էր՝ մէկ տիր կայնաւ մէջ ուր ձիու զանգիւն, ա-
նուն Աստծուն արաց, ասաց տիշամ խաչ պատարագին, վըր իմ
աջ թեւին, զանեմ կտրեմ քեառսուն ջաղցի քեար, քեառսուն կօմ-
շու կալին, ձիու թամքն ու ձինը կտրեմ, կիսեմ, էրկու կտոր ա-
նուն թալիս կըշեռք, մէկ մազ դարրեր չնի: Մէկ դիր Դաւթի
թուր իթալ կտրեց քեառսուն ջաղցի քեար. քեառսուն կաշին կը-
նաց խասաւ, Մէլիքն արաց էրկու կտոր. իպե կըռեց, էն մէկ
թակ, վըր էն մէկ թակին եօթ կիտր ծանր էր: Դօրուս ինք զինքն
անիծեց, ասաց՝ ձեռքեր թող թոյնէր էն Դաւթին, ոտքեր թոլ-
նէր էն Դաւթին, որ իթալ թուրն կէծակին, կնաց քիւսուն քեա-
մին:

Աչքերն էլ կուրցաւ, ոտքերն էլ թիւլացաւ, ձեռներն էլ թիւլ-
ցաւ: Դօրուս ինկեաւ դաւ: Ծէնով Յօվան էկաւ ասաց՝ տօ Դաւթի,

քեյ ինչ էլաւ. ասաց՝ ես ձի անիծեցի, ըսկնայ էլայ: Տօ ինչի անիծեցիր, ասաց՝ կտրեցի պար (հաւասար) չէկաւ տիւս, անիծեցի: Ծէնով Յօվան խելքով մարդ էր, ասաց չըլնի էսա մարդ մէկ ծըւսն ի, կնաց աչքեց որ մէկ ծվէն էր, կտրեց իթալ, կշռեց, տէսաւ խաւասար էր: Էկաւ Դաւթին ասաց, տօ էն մէկ պլորն էլ եօթ կիտր: Դօր Դաւթիթ իր օրինեց, ասաց՝ աչքեր բացուէր էն Դաւթին, ձեռներ ժրէր էն Դաւթին, ոտքեր ժրէր էն Դաւթին: Աստծու խրամանքյով ժրաւ Դօրու էլաւ վեր, առեց աջ կող, տարաւ ինոր երկիր Սասուն թաղեց:

Ասաց մօր, էսա ձախի կողմ քեյ կըխասնի, տար թազի: Էյ, Դօրու մենք էրթանք վէր Դաւթին: Դաւթիթ կըհէր սար նէճիր: Դօրուավան Մարյա քետաղաքի թագաւորու աղջկայ անունը Խանդուդ խաթուն էր: Լաւ որ Սասմայ մէջ կտրին մարզմ կէր անուն Դաւթիթ էր: Էլաւ ուր մտրպներ կամ աշուղներ զրկեց Սասուն, ասաց. Կնացէք ձեր Դաւթի առջև գեօվացէյք թող ձի տանի: Մտրպները (աշուղներ) էլան կնացին Սասուն, Դաւթի տուն խաղողուցին, կնացին Դաւթի տուն, Ծէնով Յօվան տանն նստեր էր, ասին՝ էսա Դաւթի տուն ի, Ծէնով Յօվան ասաց՝ խա, ինչի էք իկե, ասին՝ իկերենք Խանդուտ խաթունը ինոր խամար գեօվալու: Ասաց՝ գէ գեօվացէք, ես Դաւթին եմ. գեօվացին, առեց փէտը էկաւ ինե, ասաց՝ հայ ձեր իշերն անիծեմ, կնացէք, ձի լազըմ չի ձեր խաթուն, չըմիզեայ: Մտրպները կնացին ճամպախ հա Դաւթին իշունց կտէն, հայ կէրթէն: Ասաց՝ լինչ հա Դաւթին իշունց կտէյք, ասաց՝ լինչ անենյք, մեր խաթուն մե օղօրկեց որ ինոր Դաւթի խամար գեօվինյք, գեօվացինք, պոծանք, Դաւթիթ պաշխիշ տալու տեղ, փէտ առեց փրթաւ վըր մե տփեց, գեօ կէրթանք: Ասաց՝ տօ Դաւթի որ կայ ես եմ, մա ուրիշ Դաւթիմ էլ կայ: տիւք վիր խամար էք գեօվացե, մէ գեօվացէք: Նստան գեօվացին, ասաց՝ առէյք ձեր պաշխիշ: Քեառուն օր մնաց, ես կըգեամ: Էլան թօլին կնացին իրենց խաթունին ասին, Դաւթին էլ էլաւ կնաց ուր տուն: Քեառուն օրից յետոյ էլաւ կնաց: Շատքիչ Աստուած կիտի, կնաց Խանդուտ խաթուն կնտաւ Խանդուտ խաթունի դրան վրէն մարդմ կէր, անուն Տօլխան, ինոր մէկ պլուկ գեյտին էր, մէկը տրնդին: Ասաց՝ պարև քեյ Տօլխան, ասաց՝ Աստծու պարին՝ Դաւթի:

Տիւ խաղար պարով էկար, ալա որ իմ խաթունը առնես, կլնեմ քեյ քետարու: Տօլխան ասաց Դաւթին, ալա չիմ էսօր մարդու պարև չը առե. ալա էսօր քեռ պարեն առի:

Դաւթիթն էլ ասաց, ես էլ իմ մօրութ էլեր ի, չիւմ էսօր մարդու պարև չը առե:

Դաւթի ձինը տարան փակեալս կապեցին. դիւ մ'ասի որ քեառառն խառ էլ ուրիշ մարդ է էկած, Խանդութ խաթունը առնելու:

Ինոնց վըրէն ընկեաւ, ասին՝ պերէյք Դաւթիթն սպաննենք: Ի՞նչպէս ուր սպաննեն: Ասին՝ պերէյք վըր մեր սեղնին սպաննենք: Իրենց թրերը քեաշեցին, դրին սեղնի տակ, կանչեցին Դաւթին: Դաւթին իրե, տեսաւ, որ հմէննոց թրերը գես սեղնի տակ:

Հէտիկմը առեց հմէն իտու իրար, ծալեց իտու տոլխանին, ասաց՝ տար դի եմ այրէն: տանեմ անեմ իմ ձիուն նալ, պւռ:

Էն քեառառն մարդն էլ էլան փախան թաւլախանէն, որ իրենց ձիերը խէծնեն, փախնեն: Մ'ասի որ Դաւթի ձինը գէյլեր է-նոնց քեառառն ձինն էլ խեղտեր էր. թօղին փախան:

Դաւթիթ, Խանդութ խաթունը մնացին մէնակ, նստան զրոց: Դաւթիթ ձեռն էթալ, Խանդութ խաթունի վիզը կոռեց պագեյց: Խանդութ խաթունը գիօնփըմ (բռունցք) իզար վէր Դաւթի սրտին, եօթ պուտ արուն կաթաւ Դաւթի քթէն: Ասաց՝ մար դիւ կանդհարա չափուկ տեմբրես, որ ձի կը պազեյւ: Դաւթիթ ասաց՝ ախտ (խոստում) էլնի, չիւմ ես կանդըհարա քեաղայք սրէ չնչցուցեմ, քեյ չ'առնեմ:

Ես գես կնացի. ալա որ չէկայ, մեռայ՝ գեսս իմ ջանդակ ճօ-կես էդ խարամ լէշերաց միջն: Տնամէն, ասաց Խանդութ խա-թունը ես քեյ ինչի էն կանդար լէշերաց միջուց ճօկեմ: Ասաց. վէր իմ աջ թիկն մսէ խաչմ կայ: Քեառառն օր որ թըմըմաւ Դա-ւթիթ չէկաւ, Խանդութ խաթունը էլաւ մարդու խալաւ խագեաւ, ուր ուրմ պոնեց ուր ձեռ, կնաց, խասաւ կանդըհարա երկիր էլաւ: Միւս իրիշկաց տէսաւ որ՝ էտա երկիրը լէշով ժածկվէր էր. ծո-վու պէրըյդեր քօմ քօմ էր, կեախդան բիր ուրմ կը զանէր չորս, իինդ լէշ կը վերցնէր կիրիշկէր, միբեմ Դաւթիթ միջն է, թէ չէ.

Մէկէլ իրիշկաց տեսաւ որ ձիաւորմ գես ծովու մէջ մարդմ կըլօղինայ. էլաւ տիւս, ասաց՝ Էյ, էն մարդու յետև ինչ տիւ կան կգեաս, ես եմ սպանե: Մէյ տիր Խանդութ խաթուն կանչեց, Էհ գիյտի. հիմանսըզ տիւ ինորս սպանիցիր, իմ ձեռնէն գեմը ուր փաթնես:

Զուխտ քշեցին վէր մէ մէկէլու Դաւթիթ խասաւ Խանդութ խաթունի ծծեր կայիմմ կքեյց: Ընը ասաց Խանդութ խաթունը դիւ Դաւթիթն ես. դէ առա քեյզ պայքմ:

Առեց Դաւթիթ Խանդութ խաթուն ուր գէյր Սասուն, կիաւ խասաւ Զինմաշինու երկիր: Զինմաշինու թագաւորու աղջիկայ անուն Շիրին- Աննախուն Գիւհար, իր մարդերը յօդորկեց Դաւթիթ գէմ, ասաց՝ եան կը գայ ձի էլ կըտանի, եան չիօ, աշխարակուր: Ի կոիւ կուզեմ: Դաւթիթ ասաց՝ խըզի (իմ հետ) էրդ (կնիկ) կայ-

ձի քեառուն օր ողգա տէյք, իմ էրդ տանեմ դնեմ տուն, զեամ կոիւ անեմ: Դէ տիւ արեահատ արա, որ գեաս քեառուն օր սօրա:

Դօրուս Դաւիթ կնաց ուր տուն, որ կնաց ուր տուն խըտ Մարա թագավորուն պովաւ կոիւ թեառուն օր թըմըմաւ, ուր թիվի խաչ օր է օր ինոր կը վառէր: Դօրիս օրը մի անգամ տը լօխ-կնէր, այս կնկան ասաց՝ կնիկ, և կը լոխկնամ. ալա ինչ էպ (պակա-սութիւն) որ կը տեսնաս վըր ձի, մարգու չասես: Ինոր կնիկ իպե լօխկ-ցուց ասաց՝ վախ՝ Դաւիթ, քիւ թեեի խաչ սիլցեր ի: Դօրիս Դաւիթի խաչ հըմէն օր Դաւիթին կը վառէր. էլաւ էն մէկէլ օր կնաց Զին-մաշինու երկիր կոիւ: Ալա օր իրեյք զան կը չըլտվէր կը մտնէր ջուր. չըր կանա կոիւ անի:

Էտա Զինմաշու երկիր մէկ անխոգի պառաւմ կէր. ինչ Դաւիթ չըլտւաւ մտաւ ջուր. պառաւ խասաւ գիւթնի խոփմ տայցուց, իթալ վըր Դաւիթի խաչին, հման կը ակ ընկաւ խաչ թեերաց խեռ վառեց արաց քիւլ (մոխիր): Հըման ձին խասաւ, Դաւիթ պէնով պոնեց, ի-թալ վըր ինոր քեամկին, տարաւ Սասմա երկիր: Ինչին որ՝ Խան-դութ խանում տէսաւ որ Դաւիթը ձիու պէրան, ձին կուզեայ, համան զինք փէնջարից էթալ տակ, ինոր զյլինու տեղ չափմ դան (կորկոտ) կը ծեծուի:

Սկուն փոսացաւ. մեռաւ Խանդութ խաթուն, Դաւիթի խետ մէկտեղ խորեցին:

Սասմա տնէն մնաց Ծէնով Յօվան, հար կէէր սար նէճիր: Օրմ Յօվանի կնիկ ասաց. Ծէնով Յօվան էսօր Մէէր թող տուն՝ ջուր պէրի իմ գյլօխ լվա:

Մէէր մնաց տուն, ջուր իպե. գյլօխ լվալու ժամանակ եփ ջուր կը լցէր Մէէրի կնկայ գյլսու վրէն, աչքեր խփեր էր, հայ շե-բեփմ կը տփէր մէջ կնկայ գյլսուն, կնիկ ասաց՝ տօ ինչ կանես, ես քեյ պախերեմ զանի խամար, դու ինչ աչքեր խփերես: Տիւ տը զեսս խըտ իմ ձեռաց. փոքրիկ Մէէր ասաց: Տօ տիւ իմ աղամէն ես. (հօրեղբօր կին) ես ինչին կը յամ խըտ քու ձեռաց: Ինչին որ արաց չիզաւ էլաւ ուր եար-եախէն պատուեց, զնաց Յօվանի առջև. ա-սաց՝ էդա ինչ ի էլե քեյ. կնիկ ասաց՝ ինչ տըըլնի, տիւ Մէէր չթողիր տան էլպազա. Յօվան ասաց՝ կնիկ, ինչ անեմ. տիւ մեր տան աղաթ կիյտես. օրօնկի մեր գրկցի տուն աղէ, մենք դուռ կը շինենյք վրէն կը մնայ, տիւս կերթայ: Էլան օրօնիկեցին աղէ: Եկաւ դուռ շինուկ էր, էթող կնաց վըր խօր գերեզմընին, պառ-կաւ վըր քիթ մոթին, իլաց ասաց՝ խէրիկ, վեր էլի. քեռ ողէն ի Սասմա տնէն պէ բահր արած: Զիւն իկե, պօպիկ ոտքերս կը մսի: Խէր ձէն իտու ասաց՝ խէրիկդ ինչ անի. կնացեր ի Փարման իմ ձեռնէն, թափե ծաղիկն իմ յերիսէն, որդի քեռ գիյր չալապն ի

գյուղեւ Դօրիս էնդուց կնաց վէր մօր գերեզմնէն իւաց, ասաց. Մէրիկ, վեր էլի, մէրիկ վէր էլի, քեռ որդին բիրահը (զուրկ) արած Սասմա տնէն, ձիւն իկե իմ ոտքեր կըմսի; Խնչիս անեմ որ ինչին անհմ, թափե ծաղիկն. իմ յիրիսէն, ինգեյ ֆարման իմ ձեռնէն, քեռ գիյրն հալապն ի գյրվե;

Էլաւ կամստ արաց հալապ քշեց. շատ քիչ կնաց Աստուած գիյդի; Մէկ հէրմ (այր, անձաւ) սաստ իրե, էտա հէրով իրիշկաց մէկ քեօշկ-սարէմ կէր, մտաւ քեօշկ սարէն, տէսաւ ջատի պառաւ նստեւ ձախ ծիծ թալե վըր աջ թէկին, առև գէյտին. աջ ծիծ թալե վըր աջ թէկին. էնտենանց առեւ գեյտին խաց կըթիի; Պարե քեյ պառմաւ Աստծու պարին Մէկը. էսա շատ ժամանակ էր որ մարդու մին չըր կերերի, կարօցեր եմ: Ախ, ասաց՝ պառաւ, թող ես կուշտ խաց ուտեմ, նոր ձի կերի Կուշտ խաց կէրաւ, ասաց՝ մամիկ, մէկ քեամակ արա խետ ձի. քեռ մէջք թամաշա անեմ նոր ձի կերի: Ինչ պառաւ յետեւ արաց, մէկ դիր Մէկը էրկու ունա թըռաւ, էլաւ կայնաւ վըր ծծերաց, ասաց՝ հայ քրդի պառաւ, տիւ եմ ձեռնէն դեմք տի փոթնես: Ասաց՝ Աստծու սիրուն դիւ. ձի մսպանի, ես իմ աղջիկ կըտամ քեյ:

Պառաւ կնաց ուր աղջիկ մառնից էխան իպի: Ապա ի՞նչ աղջիկ մը՝ որ չուտես, չխմես, թամաշա անես: Էլաւ առեց պառվու աղջիկ, հայր է բարամ, կնաց հալապւ, Շատ կան իրե էքա երկրներ. կնաց հալապա թազավուրու քեսադիյ մէջ, տունմ քյրա արաւ, նստաւ ինե. ինչ կանդար միլլէթ կէր էկան կնացին, էկան կնացին: Կնացին թազավուրուն ասին թէյ, տիւ էլ խպարտացերես թէ ձի կնիկ կայ, կնիկ վըր Մէկը կնկյան խարամի կացի:

Թագաւոր շատ համոզեց, մարդ օրօնկեց, չկարցաւ Մէկը կնկայն խէլքէ խանէր: Դօրսվան ասաց՝ Մէկը իւստ պամ արէյք: Կանչեց ուր հանալին (ժողովուրդ) սատրապամ, կայմակամ, ժողովեց ասաց՝ ինչին անենյք որ Մէկը վըրէն թատաղիրմ անենյք, կնիկն առնենյք:

Ասին ինչ ուր անենյք, պիրենյք քեռ սրախ, խորմ զանենյք, ալաշա անենյք վըրէն, ծածկենյք, կանչենյք Մէկին վրէվէն քէյլի, ինի մէջ, առճիճ խալենք, լցենք վըրէն թօ մեռնի, կնիկը խառնի քեյ: Խտոնյք պաշլայեցին խոր փորել. թագավուրու տան մօտ պառաւու տոռունմ կէր, էտա պառաւն էլ ասաց՝ ես էլ իմ սրախ մէջ խորմ ուր փորեմ, խասուցեմ չիւմ թագավուրու խոր, ինչ գեախ Մէկը ինի խոր, քեաշեմ պիրեմ մէջ իմ խորին, իմ աղջիկ իջուցիմ դան, բաւքի ինորից լաճմ էլնի իմ աղջկան. թագավուրութեն առնենյք: Զիւմ թագաւոր ուր խոր պոծաւ, պառաւն էլ ուր խոր պոծաւ, էկան Մէկին ասին, արի թագաւոր քեյ կըկանչի:

Մհերի կնիկ ռամդար էր, ասաց՝ Մհեր մէրթայ, քեյ կսպանեն, Մհեր ասաց. Պան էլ չընկանա էնե, Զիւմ քեառսուն օր սպասի էկայ, էկայ, թէ չէկայ, զէնիր խմի, մեռի:

Էկան Մհերին առին կնացին: Մհեր մտաւ ուրախ, գըրքի ընկաւ խորի մէջ, չուր ինոյնք հան-հուն արեցին, արճիծ խալիցին, պառաւը մտաւ խոր՝ Մհեր քեաշեց տարաւ ուր խոր, աղջիկն իթալ ինե. Մհեր պոնեց պառվու աղջկան ձեռքեր, ութեր արաց մէկ, մէջք կուտրեց ճիստեց մէջ էն ծակին ինչ կէրթէր մէջ թագավորու խորին: Դօրիս պառաւ եօթն էծ ունէր, օր մէ խատ կըզինէր կուտէր, Մհերին թային: Իրիկուն միշտ կըխառցնէր, աղջիք, Մհեր քեյ կը մօտենայ. Էն կասէր, Մհեր խա. խա, մարէ:

Քեառսուն օրուայ մէջ եօթն էծ կէրաւ, խլսաւ, որ քեառսուն օր թըմըմաւ, պառաւ էկաւ վըր խորի պէնին ասաց. տիւ տղծվ ես, աղջիկն էլ կասի՞ խա:

Մենյք տանանյք վըր Մհերի կնկայն: Մհերի կնիկը մտերի տուն, գուռը շինե, ինչ կանդար թագաւորու գօրք կայ՝ արե թային, կուգան հմէն օր տան չորս պիւլոր կըպանեն, կանեն չին անե չնկանայ ինոր խանե տիւս:

Դառնանյք վէր պառվու աղջկան: Մարէ ասաց՝ չվան պե, ձի քեաշի տիւս, ես ծանր տղով եմ ասաց: Մհեր աչք ունէր գաշ աղջիկ խանէր տիւս, նոր խարար տէր թագաւորուն, գեէր խող լըցնէր Մհերին: Հէտիկմ Մհերը աղջկայ խալաւ խագեաւ, պառաւը քեաշեց. ինչ կըքեաշէր, ասաց՝ այ աղջիկ, ինչ կանդար ծանտրացերես. ասաց՝ չէ մարէ, տղով եմ:

Հէտիկմ խետ էլաւ տիւս, պոնեց պառվու մէջքն էլ սխկեց իթալ կնաց խորի մէջ: Էլաւ կտրտուք խալաւ խագեաւ, էրկու կտոռուկ գիյրք իսի մէջ տօպրկին, իթալ թեվ, ինգեաւ մէջ քեաղքիյն, ասաց՝ ես թուղթ արող եմ: Դօրես կնացին թագավուրուն ասին. թագաւոր ապրած կէնաս. մէյ խատ թուղթ արողմ իկե, մեր քեաղքի մէջ. կանչի խենյք չկանմայ Մհերի կնկեայ պէրան կապի պալքի քե առնի:

Դօրիս թագաւորը մարդ օրօխկեց, ասաց՝ կնացէյք, կնդէյք, պերէյք ըստեղ, կնացին, կնդան պերին թագավուրու մօտ. թագաւորը խառցուց, ասաց՝ տիւ ինչ մարդ ես, ասաց՝ ես զավրէշ եմ. ասաց՝ կանմս ըսկուն թուղթ անես. ասաց՝ խա: Ե՛, որ սկուն ի դէ թուղթ արա որ Մհերի կնիկ ձի առնի: Ասաց նյ, էղա չխօ եմ ձախ ձեռաց պան ի: Դու էլի հադիեէմ դու ձի, ես առնեմ, էրթամ մօտ Մհերի կնիկ: Էլաւ թագաւորի հաղիկ էն (պարզ) առեց, պառվու էծու մորթ քեաշեց վըր ուր, ինչ կանդար ոսկոռ կէր կախեց մնէն, էլաւ կնաց ուր կնկայ դուռ կայնաւ: Մհերի կնիկը

փէնջարից իրիշկաց տեսաւ շըխկշըխկուն դավրէշմ էկաւ կայնաւ դուռ:

Հէտիկմ, կնաց դուռ, ասաց՝ կնիկ, կնիկ, դուռ քաց, ևս Մհէրն եմ. Կն իկն ասաց. Զէ, ևս չըմաւատայ որ տիւ Մհէրն ես մէ իմ ձեռը ճխտի, փակ տան վեր ձեռը ճխան տիւս: Մհէրն մէկ+խատ ճխտեց. ահա կիտցա որ տիւ Մհէրն ես: Դուռն իպաց, ասաց. Կնիկ, էլի մէկ աղէկ հատիկէմ էլ պիբեր եմ քեր: Կնկան պանեց, առեց կնաց թագավորու դիւան, շըխկշըխկալէն մտաւ ներս. հատիէն տարաւ իտի թագավորու առջն, նստաւ դիմին մէջ խետ կըզրուցի, խետ մէկ ոսկոր կառնէր կըզանէր վազիրմ կսպանէր, Վազիրներ ասին. Թագաւոր՝ էսա դավրէշը մե սպանց մէկ թուվա: Ասաց թագաւոր, թէ որ ձի էլ սպանի, ես ձէն չըմ խանի, էն ինչէն կանի, ձի խամար կանի. Մէկէլ ոչխարի լուլէն կընէլ մըջ էրկու մատ, կըզանի թագաւորն էլ կսպանի: Կընի տիւս կասի, դէրուս եան տի գէյք իւը ձի կոիւ անէք, եան չխօ, ես եմ ձեր թագաւոր:

Ի՞նչ անեն, ինչ չանեն, կէնեն կերթան մօտ Աստղիկ պարոն: Ամա Աստղիկ պարոնը կիտի որ Մհէրը ինոր արուն իւ Մհէրն էլ ուր կնկան կըպատուիրի կասի. Տէ, տիւ խօսք չասես. իմ էրկներաց չդիանի, դէրուս զըրպմ զանեմ, սպանեմ իմ խօրովաչը: Դօրսւան Աստղիկ պարոնը խըստ աստղերաց կըխաղայ, կըկանչի վերեանց: Կինը փէնջարից կասի, էյ վախ, խաղալու իւ վեր Աստղիկ պարոնին, տունը աւերի փոքր Մհէրին. մէկ տիր Մհէրի սրտին կըտիպնի կասի՞ քեռ վիզը կոտրէր կնիկ, տիւ էջա խօսք չասէր. կըզանի նետք անեղ կըպանի Աստղիկ պարոնի ուըրտին, շուռ կառնի կուգեա տակ: Կտրին Աստղիկ դօրմ առաջ մէջ աստղերաց ինչ ուր գիւրզ հիրար կտէր, կրակ կըթափէր վըր Մհէրի գլխուն, մկայ խօսքով, տաշխի պէս թըրըփ ինկաւ Մհէրի գիրկ, ասաց՝ ախ Մհէր, ես քեռ չըր զանէ տիւ ինչի՞ զարկիր քեռ խօրօխպօր: Դէ պէ քեռ ծունկ իմ զյլօխ դնեմ վէրէն, նոր իմ խո-գիյն տամ: Գյլօխ իդի վըր Մհէրի գլխուն, խոզիյն իտու:

Մհէրն էր, իր խօրօխպօր ինստու, էն քեաղայք քեաղքով սրբեց, արաց խողին խաւասար, քեար քաղեց, առաջ մաղեց արաց դաշտ: Խրեշտակներ էկան դարան մտուցին Ակոփու քեար, դէլ չիւմ մկայէլ էն տեղ կըմնայ, կանի՞ տը անի որ ըլնի տիւս. խո-դը ինոր տայամիշ չիդա, էլմ էլ կտատանի:

Աստծուց իրեյք ինձոր իճաւ, մէկը ասօղին, մէկը լսօղին, մէկը ականջ արօղին:

Պատմեց 1910 թ. օգոստոսի 27-ին Հայոց Զօրի Քերժ գիւղում Մանուկ Սարգսեան անգրագէտ, աշխայդ և ճարպիկ գիւղուն: